Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения молодых учёных и специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ISSN 1829-1937

ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ

3-4, 2014



ԿԱՆԱՅՔ 1988-1991ԹԹ. ԱՐՑԱԽԻ ՀԱՐԱՎԱՐԵՎԵԼՅԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ (ԱՍԿԵՐԱՆ, ՀԱԴՐՈՒԹ, ՄԱՐՏՈՒՆԻ)

Ի.Ն. Ավանեսյան, *ԱրՊՀ*

1988թ. սկիզբ առած Արցախյան շարժումն ազգային զարթոնք էր, որը, նոր էջ բացելով մեր պատմության մեջ, հանգեց ազգային ինքնագիտակցության դրսևորման գաղափարական և հոգևոր վերելքի: Արցախյան գոյապայքարի նոր փուլը համընկնում է գորբաչովյան վերակառուցման տարիների հետ՝ սկսած 1985 թվականից: Հռչակված վերակառուցման ընթացքում ազգային հարցին յուրահատուկ արժեք տրվեց, և այն առաջին պլան մղվեց Արցախում, որտեղ պայքարը, ընդհանուր առմամբ, չէր դադարել:

1985-1987թթ. Արցախում ստեղծվեցին գաղտնի կազմակերպություններ, թանձրացավ բնակչության դժգոհությունը, ինչը հանգեցրեց գաղտնի ստորագրահավաքների, որոնց արդյունքները Կենտրոն էին հասցվում Մոսկվա մեկնող պատվիրակությունների միջոցով: Շարժումը տարածվել էր Արցախի ամբողջ տարածքում: Շարժման ընդհատակյա փուլում Արցախի հարավարևելյան շրջանները լրիվությամբ ներառված էին ազատագրական գործընթացի մեջ: Ավելին, այդ շրջանների նախաձեռնող խմբերը ԼՂ ինքնավար մարզում առաջիններից էին, որ մեծապես նպաստեցին, որպեսզի շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի: Այս ամենին անմասն չէին նաև կանայք: Առհասարակ, ղարաբաղյան շարժումը յուրահատուկ էր կանանց մեծաթիվ ու ակտիվ մասնակցությամբ: Կանանց ներկայության ու մասնակցության շնորհիվ էր, որ հանրահավաքների մասնակից տասնյակ հազարավոր մարդկանց հուզումները մնում էին կարգ ու կանոնի, սթափ ու խոհուն վարվելակերպի հունի մեջ:

1989թ. Արցախում անցկացված մարդահամարի համաձայն՝ հարավարևելյան տարածաշրջանում այսպիսին էր կանանց թիվը. Ասկերանի շրջանում 18930 հոգուց 9652-ը կազմում էին կանայք, Հադրութի շրջանում՝ 11073-ից 6205-ը էին կանայք, իսկ Մարտունու շրջանում՝ 20143-ից 10331-ը:[1]

Նրանց հիմնական մասը կանգնած է շարժման ակունքներում:

1986թ. Արցախի հարավարևելյան շրջաններում ընդհատակյա շարժումն սկիզբ առավ ստորագրահավաքներով: Այդ աշխատանքներին մասնակից կանայք ակտիվ գործում էին ոչ միայն շրջկենտրոններում, այլ նաև գյուղերում:

1987թ. շարժման առաջնահերթ խնդիրներից էր Նախաձեռնող խմբերի ստեղծումն ամենուրեք, այդ թվում՝ հարավարևելյան տարածաշրջանում: Արդեն սեպտեմբերին Ասկերանի շրջանի գրեթե բոլոր գյուղերում գործում էին նման խմբեր, որոնք ակտիվ համագործակցության մեջ էին շրջկենտրոնի իրենց համախոհների հետ:[2]

Ասկերանում նախաձեռնող խմբերում ընդգրկված կանայք ոչ միայն կազմակերպում էին ստորագրահավաքը, այլ նաև աշխատանքներ էին տանում գյուղերում: Ստորագրություն վերցնում էին ոչ պատահական մարդկանցից, այլ նրանցից, ովքեր համակված էին նույն այդ գաղափարով՝ ԼՂԻՄ-ի վերամիավորում Հայկական ԽՍՀ-ին: Ստորագրություններ հավաքելու ձևաթղթերը, որոնցում պետք է նշվեին ստորագրողի անձնագրի համարն ու հասցեն, կին ակտիվիստները բաժանում էին և, ինչպես նրանք են վկայում, օրվա մեջ երկու անգամ այցելում էին «Կարմիր դրոշ» թերթի խմբագրատուն՝ հավաքած ստորագրությունները հանձնելու համար: Այդ

[1] Итоги всесоюзной переписи населения 1989г. Численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской автономной области, таблица 2с, Москва 1989г.
[2] «Լուսաբար», թիվ 2-3, 11.02.2013:

աշխատանքները կատարվում էին խիստ գաղտնի:[3]

Նամակների, դիմումների, հանրագրերի հոսքը Հադրութից սկսվեց դեռևս 1986 թվականին: Նախաձեռնող խմբի անդամ և ակտիվ կազմակերպիչ էր Նելլի Կասպարովան (Հադրութի միջնակարգ դպրոցի ռուսաց լեզվի ուսուցչուհի):[4]

Խումբը ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիանվորելու խնդրանք-պահանջով, ինչպես նաև շրջանի բնակչությանը հուզող այլ խնդիրների առնչությամբ հանրագրեր էր ուղարկում շրջանային ու մարզային ատյաններին, Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ բարձրագույն ղեկավար մարմիններին և Կենտրոնին: Մասնավորապես, խմբի նախաձեռնությամբ կազմված և Հադրութի շրջգործկոմին ուղղված հանրագրում հադրութցիները պահանջում էին լուծել Հադրութում հայկական հեռուստաալիք ունենալու հարցը և դիմել Մոսկվային՝ Արցախի հարցին արդարացի լուծում տալու համար: 1987թ. հադրութցիները հանրագրով, այդ թվում՝ նաև նրա ակտիվիստների ստորագրությամբ դիմում են ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին՝ խնդրելով լուծել արցախահայության ազգային պահանջատիրության հարցը՝ ԼՂԻՄ-ը վերամիավորել Հայաստանին:[5] Հայկական հեռուստաալիքի հարցը չլուծվեց: Միևնույն ժամանակ, Հադրութում սկսվեցին ճնշումները նախաձեռնող խմբի անդամների հանդեպ: Չնայած դրան, շարժումը հետզհետե ավելի ու ավելի էր ծավալվում՝ մասնակից դարձնելով շրջանի բոլոր գյուղերը: Հերթական ստորագրությունների փաթեթը Մոսկվա ուղարկվեց 1988թ. հունվարին: Այդ անգամ ստորագրահավաքի կազմակերպմանը մասնակցող 60 հոգուց 20-ը կանայք էին: Այնուհետև վերջիններիս մասնակցությամբ Հադրութում տարածվում են «Ղարաբաղը բռնությամբ չի կազմի Ադրբեջանի մի մաս», «Ղարաբաղը կազատագրվի ամեն գնով, ինչ էլ, որ լինի», «Սահմանադրությունը ժողովրդի համար է, ոչ թե ժողովուրդը՝ սահմանադրության», «Նախիջևանը օրինակ է Ադրբեջանի վարած քաղաքականության մասին» բովանդակությամբ կարգախոսներ:

Ընդհատակյա փուլում իրենց ակտիվ մասնակցությունն էին ցուցաբերում նաև Մարտունու շրջանի կանայք, որոնց շարքերում էին Անգելինա Հովսեփյանը (շրջխորհրդի գործկոմի պլանային հանձնաժողովի նախագահ), Ռիտա Գևորգյանը (Մարտունու կենտրոնական գրադարանի տնօրեն), Սիլվա Բալայանը (Մարտունու կոմերիտշրջկոմի քարտուղար), Սիլվա Խաչատրյանը (լրագրող):

Դեռևս 1986թ. Ստեփանակերտում հիմնվեց ընդհատակյա կազմակերպություն, որը 1987-ին ստացավ «Արցախյան միություն» անունը: Միությունը, որը բաղկացած էր 11 հոգուց, ունեցավ ծրագիր և կանոնադրություն: Կազմակերպության բաժանմունքներ հիմնվեցին նաև մարզի շրջաններում: Մարտունու բաժանմունքի ղեկավարներից էր Անգելինա Հովսեփյանը:[6] Անդրադառնալով այն օրերին ծավալված ընդհատակյա աշխատանքներին, Անգելինա Հովսեփյանը վկայում է. «1986թ. ընդգրկվեցի շարժման կազմակերպիչների գաղտնի խմբի մեջ: Այդ ժամանակ գաղտնի ստորագրահավաքներ էին իրականացվում, և ես միացա դրանց կազմակերպմանը: Ինձ հանձնարարված էր տեղեկություններ պատրաստել վերջին տասը տարիների շրջանի սոցիալ-տնտեսական վիճակի մասին, այն ԽՄԿԿ Կենտկոմ ներկայացնելու նպատակով: Մոսկվա մեկնած պատվիրակությունը, վերադառնալով, տեղեկացրեց, որ անհրաժեշտ է կոլեկտիվների, կազմակերպությունների և անհատների անունից նամակներ, հեռագրեր

3. ԼՂՀ Աս. շրջ.արխիվ, ֆ1 ց.1.գ46, թ4: Ակտիվիստների շարքերում էին Միրա Ավանեսյանը, Նորա Առուշանյանը, Մելանյա Առուշանյանը, Գրետա (Ջեմմա) Թամրազյանը:

4 « Դիզակ», թիվ 8, 27.02.1998:

5 ԼՂՀ Հադրութի շրջ.արխիվ, . ֆ1 ց.3 .գ 24, թ5: Հանրագրում առկա էր Էլզա Աբրահամյանի, Անիկ Հայրապետյանի և Սիլվա Պողոսյանի ստորագրությունը:

6. Հ.Աբրահամյան, Մարտնչող Արցախը (1917-2000), գիրք գ, Ստեփանակերտ 2007, էջ19: Միությունը 1987թ. ամռանը և աշնանն իրագործեց իր նվազագույն ծրագիրը՝ հավաքելով ավելի քան 80 հազար ստորագրություն, որը նոյեմբերի վերջերին ներկայացվեց ԽՄԿԿ Կենտկոմին:

ուղարկել Մոսկվա: Ամեն ինչ կազմակերպվում էր նախատեսված ծրագրերի համաձայն, բոլորը գիտակցում էին սկսած գործի կարևորությունը և աշխատում էին մեծ նվիրումով»:[7]

1988-ի սկզբներին շարժումը նոր, հուժկու թափ առավ: Անհրաժեշտ էր ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ հետ վերամիավորելու մասին Հռչակագիրը համաժողովրդական քննարկման դնել ու համապատասխան որոշում կայացնել: Արցախի հարավ-արևելյան տարածաշրջանում ևս շարժման նախաձեռնող խմբերը կազմեցին ժողովների անցկացման ժամանակացույց, որը հիմնականում համապատասխանեցվեց ԼՂԻՄ-ում ավանդաբար փետրվարին անցկացվող տնտեսությունների ղեկավարների հաշվետու-ընտրական ժողովների ժամանակացույցի հետ: Ասկերանում նախաձեռնող խմբի ղեկավար Սլավա Առուշանյանի հավաստմամբ կազմվեց որոշման նախագիծ, որը պետք է ներկայացվեր հանդիպումների ժամանակ: Նրա կինը՝ Մելանյա Առուշանյանը, ամուսնու հետ մասնակցում էր նախաձեռնող խմբի աշխատանքներին՝ ստորագրահավաքներին, նաև կարգախոսներ տարածում, կազմակերչական աշխատանքներ տանում՝ խաղաղ ցույցերին պատրաստվելու համար:[8]

Հանդիպումների ժամանակ ժողովականներին ներկայացվում էր Հռչակագրի նախագիծն ու կազմակերպվում փաստաթղթի քննարկումներ: Ամենուրեք այն հավանության էր արժանանում: Այդ գործընթացը նոր հույսեր արթնացրեց մարդկանց մեջ՝ Արցախի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու գործում: Քննարկումների ժամանակ մարդիկ միակարծիք էին՝ ԼՂԻՄ-ը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին: Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմը որոշեց շարժումը խեղդել, և փետրվարի 11-ին Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի ներկայացուցիչները ժամանեցին Արցախ՝ կուսակցական ակտիվի նիստեր գումարելու նպատակով, կուսակցական կազմակերպության միջոցով շարժումը կասեցնելու համար: Սակայն փետրվարի12-ին Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղարի (Վ. Կոնավալով) առաքելությունը Ասկերանում տապալվեց, ինչն էլ նպաստեց, որ շարժումը ստանա համաժողովրդական բնույթ:[9]

Նույն օրը հանրահավաքներ կազմակերպվեցին Ասկերանում, Հադրութում, Մարտունիում:

Հադրութում ևս նախատեսված կուսակցական ակտիվի ժողովը տապալվեց, և փետրվարի 12-ին կայացավ առաջին հանրահավաքը, որտեղ հավաքվել էր մոտ հազար մարդ, վանկարկելով՝ «Միացում», «Հայաստան»:[10]

Հանրահավաքի մասնակիցները հաջորդ օրը՝ փետրվարի 13-ին, պահանջեցին գործադիր իշխանությանը կնիքով հաստատել ԼՂԻՄ-ը Մայր Հայաստանին վերամիավորելու մասին Հռչակագիրը: Միայն ժամը 17.00-ին հաստատվեց Հռչակագիրը: Այն հանդիսավորությամբ ընթերցվեց, հետո եղան ելույթներ: Այս ամենը կազմակերպվում էր նախաձեռնող խմբի ջանքերով, որի ղեկավարներից էր Նելլի Կասպարովան: Նա մեկն էր այն գլխավոր գործող անձանցից, ովքեր կազմակերպում էին նամակների, հանրագրերի հոսքը Մոսկվա, իսկ փետրվարի 12-ին ակտիվ աշխատանք տանում կուսշրջկոմի պլենումում Հռչակագրի ընդունման, ապա և հաջորդ օրը մարզային իշխանությունների կողմից այդ փաստաթղթի օրինականացման ուղղությամբ: Նրա համախոհների շարքերում մեծ թիվ էին կազմում հադրութցի կանայք:[11]

Փետրվարի 12-ին, Մարտունու շրջկենտրոնում տեղի ունեցավ առաջին զանգվածային հանրահավաքը: Հանրահավաքում ելույթ ունեցան նաև կին-ակտիվիստները և ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու մասին Հռչակագրի ռուսերեն օրինակը ներկայացվեց հանրահավաքի

---

[7] «Ամարաս», 15-29.02.2008:
[8] ԼՂՀ Ասկ. շրջ.արխիվ, ֆ1 ց.1.գ 43, թ 5:
[9] Վ. Բալայան, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականության պատմության (1813-2007թթ.): Ստեփանակերտ, 2012թ. էջ 280:
[10] Թ. Հակոբյան, Կանաչ ու սև Արցախյան օրագիր: Երևան-Ստեփանակերտ, 2008թ., էջ 28:
[11] «Դիզակ», թիվ 03, 12.02.2007:

մասնակիցներին (Հռչակագիրը կարդաց Իրինա Մանասյանը):[12]

Երբ Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի ներկայացուցիչների պլանները ձախողվեցին բոլոր շրջաններում, նրանք որոշեցին փետրվարի 13-ին կուսշրջկոմների բյուրոների համատեղ նիստ գումարել՝ շարժումը կասեցնելու համար: Ասկերանի նախաձեռնող խմբերը, որոնք համագործակցում էին Ստեփանակերտի և բոլոր շրջանների նախաձեռնող խմբերի հետ, որոշեցին բյուրոների համատեղ նիստը կասեցնելու համար փետրվարի 13-ին Ստեփանակերտում հանրահավաք անցկացնել:

Շարժման ակտիվիստներին հաջողվեց այդ օրն անցկացնել համաժողովրդական հանրահավաք, որին մասնակցում էին ուսանողներ, ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվներ՝ իրենց ցուցապաստառներով: Այդ հանրահավաքը վերջնականապես տապալեց շարժումը դատապարտող որոշման ընդունումը, որի նախագիծը նախօրոք պատրաստ էր: Հանրահավաքներ, ցույցեր տեղի էին ունենում ոչ միայն Ստեփանակերտում, այլ նաև մարզի շրջաններում: Փետրվարի 15-ին հերթական հանրահավաք է տեղի ունենում Ասկերանում: Հանրահավաքի ութ պատվիրակները, այդ թվում Ռեբեկա Եղյանը, կոչով դիմում են ժողպատգամավորների շրջխորհրդի նստաշրջանի մասնակիցներին.

«Մենք՝ Ասկերան ավանի և Ասկերանի շրջանի հայաբնակ գյուղերի հասարակության ներկայացուցիչների հանրահավաքի մասնակիցներս, կոչ ենք անում ժողովրդական պատգամավորների շրջխորհրդի բոլոր պատգամավորներին պաշտպանել շրջանի հասարակության պահանջը և քվեարկել հօգուտ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու արդարացի պահանջի»:[13]

Փետրվարի 12-13-ի դեպքերից հետո Ասկերանի նախաձեռնող խումբը նամակ է պատրաստում և 12 հոգուց բաղկացած պատվիրակության հետ ուղարկում Հայաստան: Պատվիրակության մեջ ընդգրկված կին-ակտիվիստները ևս մասնակից են դառնում փետրվարի 21-ին Երևանի թատերական հրապարակում կայացած բազահազարանոց հանրահավաքին:[14]

Միաժամանակ կանանց մասնակցությամբ մարզի հարավ-արևելյան շրջանում տեղի էին ունենում ժողովներ՝նվիրված հիմնախնդրի կարգավորմանը: Փետրվարի 15-ին հրավիրվում է արհմիությունների Հաղրութի շրջանային կառույցի նիստ, որտեղ լսվեց 24 մասնակիցների, այդ թվում՝ 10 կնոջ ելույթ: Նիստում որոշվում է նամակով դիմել ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին՝ խնդրելով աջակցել Ղարաբաղյան հիմնահարցի արդարացի լուծմանը:[15]

Արդեն փետրվարի կեսերին մարզում սկսվում է ԼՂԻՄ շրջանների ժողովրդական պատգամավորների, այդ թվում կին-պատգամավորների դիմումների հոսքը շրջանային խորհուրդներ՝ շրջանային արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջով՝ ԼՂԻՄ-ի հարցը քննարկելու համար:

Առաջին հանրահավաքից հետո ժողովրդական պատգամավորների Մարտունու շրջանային խորհուրդ են դիմում մի շարք պատգամավորներ, այդ թվում՝ կին-պատգամավորներ՝ պահանջելով պաշտպանել Մարտունու շրջանի բնակչության պահանջը և մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին հարցը քննարկելու համար հրավիրել ժողովրդական պատգա-

---

[12] «Ամարաս», 1-15.01.2013: Ելույթ ունեցողների թվում էին նաև Սիլվա Խաչատրյանը և Ռիտա Գևորգյանը:

[13]. ԼՂՀ Ասկ. շրջ.արխիվ, ֆ1 ց.1.գ 53, թ5:

[14] ԼՂՀ Ասկ. շրջ.արխիվ, ֆ1 ց.1.գ43, թ4: Պատվիրակության կազմում էին Նորա Առուշանյանը և Ասյա Հայրապետյանը:

[15] ԼՂՀ Հաղրութի շրջ.արխիվ, . ֆ1 ց1. .գ 39, թ133:

մավորների շրջանային արտահերթ նստաշրջան:[16]

Այնուհետև փետրվարի 18-ին Ասկերանում շրջանայինի խորհրդի մի խումբ պատգամավորներ՝ 15 կին պատգամավորների մասնակցությամբ դիմում են շրջխորհրդի գործկոմին, խնդրելով «Ադրբեջանական ԽՍՀ ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի մասին» Ադր. ԽՍՀ օրենքի 31-րդ և 35-րդ հոդվածների պահանջներին համապատասխան հրավիրել շրջանային խորհրդի արտահերթ նստաշրջան և քննարկել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին հարցը, ընդունել համապատասխան որոշում:

Դիմումում, մասնավորապես, ասվում է. « Մենք՝ ներքոստորագրյալ պատգամավորներս, պահանջում ենք հրավիրել շրջխորհրդի արտահերթ նստաշրջան և քննարկել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին շրջանի հասարակության կողմից քննարկված ու ջերմ պաշտպանություն գտած հռչակագիրը և ընդունել համապատասխան որոշում»:[17]

Իսկ փետրվարի 19-ին հրավիրվում է ժողպատգամավորների Մարտունու 20-րդ գումարման շրջխորհրդի 3-րդ արտահերթ նստաշրջանը, որին մասնակցում էին նաև 24 կին-պատգամավորներ: Ելույթ ունեցող կանայք ևս առաջարկեցին խնդրել ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզխորհրդի գործկոմին՝ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին հարցը ներկայացնել մարզխորհրդի նստաշրջանի քննարկմանը:[18] Հարկ է նշել նաև գյուղական խորհուրդների կողմից նամակները շրջխորհրդների գործկոմներին՝ շրջխորհրդի նստաշրջան հրավիրելու առաջարկով, որտեղ առկա է նաև կանանց ստորագրությունները: Առկա նյութերը վկայում են այն իրողությունը, որ կանայք համազգային գործում մասնակցում էին բոլոր նախաձեռնություններին՝ հանուն մեկ նպատակի: Նրանց մասնակցությամբ փետրվարի 18-ին Ասկերանի շրջխորհրդի գործկոմին են դիմում Նորագյուղի, Նախիջևանիկի, Խնապատի, Պատարայի գյուղական խորհուրդների գործկոմները՝ առաջարկելով հրավիրել շրջխորհրդի նստաշրջան և քննարկել ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելու մասին հարցը:

Փետրվարի 20-ին կայացավ նաև ժողպատգամավորների Ասկերանի 20-րդ գումարման շրջխորհրդի 5-րդ արտահերթ նստաշրջանը: Նիստում 10 ելույթ ունեցողներից 3 կին-պատգամավորներ՝ Անիկ Ասատրյան, Երմոնյա Սարգսյան, Թամարա Փարամազյան, ևս արտահայտեցին հանրության կամքը՝ ԼՂԻՄ-ի վերամիավորումը Հայաստանին և որպես ժողովրդի ընտրյալ և ժողովրդի շահերը պաշտպանող պատգամավորներ, առաջարկեցին նստաշրջանի անունից հռչակագիր ներկայացնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու մասին:

Արտահերթ նստաշրջանն ընդունեց որոշում. «Հավանություն տալ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին աշխատավորական կոլեկտիվների և հասարակայնության առաջարկությանը, խնդրել ժողովրդական՝ պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի գործկոմին՝ տվյալ հարցը ներկայացնել ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի նստաշրջանի քննարկմանը և, ղեկավարվելով ԽՍՀՄ Սահմանադրության 78-րդ հոդվածի պահանջով, հարց հարուցել Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների նախագահությունների առջև և խնդրել նրանց համաձայնու-

[16].ԼՂՀ Մարտունու շրջ.արխիվ, . ֆ1 ց.1 .գ 59, թ14: Մասնակցում էին Էլեոնորա Բալայանը (թիվ 5 ընտրատարածք), Սեդա Օհանյանը (թիվ 46 ընտրատարածք), Լյուբա Գրիգորյանը (թիվ 52 ընտրատարածք), Սիրուշ Դաղայանը (թիվ 74 ընտրատարածք), Լիլյա Ավանեսյանը (թիվ 53 ընտրատարածք):

[17]. ԼՂՀ Ասկ. շրջ .արխիվ, ֆ1 ց.1.գ 57, թ5: Մասնակցում էին Ալինա Ասրյանը, Անիկ Ասատրյանը, Սուսաննա Գաբրիելյանը, Սվետլանա Խաչատրյանը, Անահիտ Պետրոսյանը, Վեներա Գրիգորյանը, Էմմա Դանիելյանը, Էվելինա Ստեփանյանը, Ելիզավետա Սարգսյանը, Գրետա Մարտիրոսյանը, Երմոնյա Սարգսյանը, Ստելլա Բալասյանը, Անուշ Անդրյանը, Նազիկ Դաղայանը, Ասյա Պետրոսյանը:

[18] ԼՂՀ Մարտունու շրջ.արխիվ, . ֆ1 ց.1 .գ 3, թ7: Ելույթ ունեցան Կարինե Բաբայանը, Էլեոնորա Բալայանը և Լիլյա Ավանեսյանը:

թյունը Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու հարցում »:[19] Նույն օրը կայացավ ժողպատգամավորների Հաղրութի 20-րդ գումարման շրջխորհրդի 4-րդ նստաշրջանը, որտեղ քննարկվեց «ԼՂԻՄ-ի և Նախիջևանի միացումը Հայկական ԽՍՀ -ին և այդ հարցի վերաբերյալ Շահումյանի, Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի շրջաններում հանրաքվե անցկացնելու ու դրանք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը ներկայացնելու մասին» հարցը: Լսվեցին նաև կին պատգամավորների ելույթները, որոնցում արտահայտվեց շրջանի հայ ազգաբնակչության կամքը: Ընդունվեց որոշում. «Խնդրել մարզխորհրդի գործկոմին նստաշրջանի քննարկմանը ներկայացնել ԼՂԻՄ-ի և Նախիջևանի միացումը Հայկական ԽՍՀ-ին և Շահումյանի, Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի շրջաններում անցկացնել հանրաքվե»:[20]

Մարզխորհրդի արտահերթ նստաշրջանը 1988-ի փետրվարի 20-ին քննարկեց «ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու մասին» հարցը և ընդունեց իր պատմական որոշումը:[21] Արդյունքում ծնվեց մերօրյա պատմության թերևս ամենանշանավոր և հայանպաստ իրավական որոշումը:

Սակայն Կենտրոնն արցախահայության նկատմամբ անհանդուրժողական դիրք գրավեց և սկսեց համագործակցել ադրբեջանական իշխանությունների հետ, նկատի առնելով, որ երկրի ներսում ազգերի ինքնորոշման իրավունքի իրագործումը լուրջ վտանգ է սպառնում կոմունիստական կուսակցության համապարփակ տիրապետությանը:

Չնայած այդ ամենին, 1988-89թթ. Արցախի հարավարևելյան շրջաններում ևս կանանց անմիջական մասնակցությամբ շարունակվում էին ցույցերն ու հանրահավաքները, գյուղխորհուրդների նիստերը, աշխատավորական կոլեկտիվների ժողովները: 1988-ի նոյեմբերի 2-ին ժողպատգամավորների Ասկերանի շրջխորհրդի արտահերթ նստաշրջանում, նոյեմբերի 9-ին շրջանի Հարավ գյուղի գյուղխորհրդի նիստում, նոյեմբերի 12-ին Խնապատի գյուղական դպրոցի մանկավարժական խորհրդի նիստում, 1989թ. ապրիլի 28-ին Հարավ գյուղի հասարակության ընդհանուր ժողովում, ապրիլի 29-ին Ակնաղբյուր գյուղի հասարակության ընդհանուր ժողովում ելույթներ ունեցան կանայք՝ պահանջելով ԼՂԻՄ-ի վերամիավորումը Հայկական ԽՍՀ-ին:[22] Միաժամանակ շարունակվում էր հանրագրերի, դիմում-նամակների հոսքը: 1988-ի սեպտեմբերին Մարտունու շրջանի աշխատավորներից 250 հոգու ստորագրությամբ հանրագիր է ուղղվում ԼՂԻՄ կուսմարզկոմի առաջին քարտուղար Հ. Պողոսյանին՝ խնդրելով նպաստել Ղարաբաղի հարցի արդարացի լուծմանը:[23]

1989թ. հուլիսից Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կողմից ենթարկվեցին տնտեսական շրջափակման: Արցախում նոր թափ առան պատժիչ բռնամիջոցները: Հաշվի առնելով առկա բարդ իրադրությունը՝ Կենտրոնի որոշմամբ 1989թ. հունվարի 20-ին ԼՂԻՄ-ում ստեղծվում է Հատուկ կառավարման կոմիտե՝ ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Ա. Վոլսկու գլխավորությամբ:[24] Ստեղծված լարված իրավիճակը, Ադրբեջանի կողմից իրականացվող բռնությունները ստիպում են շրջանի բնակիչներին նորանոր քայլեր ձեռնարկել: Այդ մասին է վկայում 1989թ. մայիսի 19-ին տեղի է ունեցած ժողպատգամավորների Մարտունու 20-րդ

---

[19] .ԼՂՀ Ասկ. շրջ . արխիվ, ֆ1 g, 1.գ 58, թ5:

[20]. ԼՂՀ Հաղրութի շրջ.արխիվ, . ֆ1 g.1 .գ 40, թ. 145:

[21].Պատմական նստաշրջան, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ստեփանակերտ 2008թ., էջ 31: «Ընդառաջելով ԼՂԻՄ աշխատավորների ցանկություններին՝ խնդրել Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին ու Հայկական ԽՍՀ ԳԽ-ին՝ խոր ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իրավունքների նկատմամբ և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցի դրական լուծման համար»:

[22] ԼՂՀ ՊԱ . ֆ2 g.1 .գ 3, թ22-29: Ելույթ ունեցան Անիկ Աատրյանը, Սվետլանա Պետրոսյանը, Աիդա Համբարձումյանը, Էլեոնորա Ավանեսյանը:

[23], ԼՂՀ ՊԱ . ֆ2 g.1, գ13, թ27-28: Այդ թվում՝ Հասմիկ Հայրապետյան, Միլվա Խաչատրյան և ուրիշներ:

[24]«Սովետական Ղարաբաղ» 15.01.1989:

գումարման շրջանային խորհրդի 6-րդ նստաշրջանը, որտեղ անընդունելի է համարվում ԼՂԻՄ-ի կառավարման հատուկ ձևը: Նիստին ներկա 23 կին պատգամավորներից 3-ը՝ իրենց ելույթներում կարևորում էին այն հանգամանքը, որ հատուկ կառավարման կոմիտեի քողի տակ Ադրբեջանի ղեկավարությունը շարունակում է անպատիժ միջամտել ինքնավար մարզի գործերին, ոտնահարել նրա իրավունքներն ու շահերը: Նստաշրջանն ընդունում է որոշում. «Հաշվի առնելով, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից քննության չեն առնվել ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումները, դիմել Խորհուրդների համամիութենական համագումարին՝ լրիվ իշխանությունը օգտագործելու, ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանների որոշումները քննարկելու և Հայկական ԽՍՀ-ի հետ ԼՂԻՄ-ը վերամիավորելու խնդրանքով»:[25]

Ապա նույն թվականին տեղի է ունենում Մարտունու կուսշրջկոմի բյուրոյի և ժողպատգամավորների շրջխորհրդի գործկոմի համատեղ նիստը, որտեղ դատապարտվում է 1989թ. նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի «ԼՂԻՄ-ում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» որոշումը, որով նախատեսվում էր ԼՂ-ն կրկին բռնությամբ վերադարձնել Ադրբեջանական ԽՍՀ իրավասությանը:[26]

Ադրբեջանը շարունակում էր Արցախյան շարժման նկատմամբ իր անհանդուրժողական դիրքորոշումը, նրա ահաբեկչական քաղաքականությունն ավելի ու ավելի լայն ծավալներ էր ստանում: Առկա ծանր իրավիճակից ելնելով՝ Արցախում և Հայաստանում ստեղծվում են ինքնապաշտպանական ջոկատներ: Արցախի հարավ-արևելյան տարածաշրջանում կանայք նույնպես մասնակից դարձան ինքնապաշտպանական գործողություններին: Նրանք սննդամթերք, փամփուշտ, այլ զինամթերք էին հասցնում բարձրունքներում տեղակայված կամավորականներին, պահպանում հեռախոսակապը շրջկենտրոնների և Ստեփանակերտի հետ, ինչպես նաև անդամագրվում ինքնապաշտպանական ջոկատներին: Նրանց գործունեության շրջանակը հետզհետե ավելի էր ընդարձակվում: Ապա սկսեցին մասնակցել Երևանից զենք-զինամթերքի տեղափոխմանը, ինչով զինվում էին ինքնապաշտպանական ջոկատները: Սաստկացան բնակչության նկատմամբ իրականացվող կամայականությունները: 1991թ մայիս և հունիս ամիսներին ադրբեջանական միլիցիայի հատուկ նշանակության (ՕՄՕՆ) ջոկատները խորհրդային բանակի զորքերի հետ համատեղ իրականացրին «Օղակ» ռազմագործողությունը: Հունիսին հիմնահատակ կործանվեցին Հադրութի և Մարտակերտի շրջանի 20-ից ավելի հայկական գյուղեր, սպանվեցին ու վիրավորվեցին հարյուրավոր կանայք, երեխաներ, ծերունիներ: Չնայած այդ ամենին, 1991թ. սեպտեմբերի 2-ին Ստեփանակերտում կայացավ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը՝ բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ, որտեղ ընդունվեց «Հռչակագիր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման մասին»:[27] Դրանով արցախահայությունը նորից հաստատեց ազատության համար մինչև վերջ պայքարելու իր վճռականությունը:

Իրողությունը սրերով ընդունեց Ադրբեջանի ղեկավարությունը և 1991թ նոյեմբերին Ադրբեջանի զինված ագրեսիա սկսեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ: Ինչպես մյուս վայրերում, Արցախի հարավարևելյան շրջաններում ևս կանայք հայրենասիրական մղումներով կամավորագրվեցին ինքնապաշտպանական ջոկատներին: Մարտի դաշտում

[25] ԼՂՀ Մարտունու շրջ.արխիվ, . ֆ1 ց.1 .գ 5, թ5-6: Ելույթ ունեցան Անգելինա Հովսեփյանը, Անժելա Խաչատրյանը և Մելանյա Ադամյանը:
[26] Նույն տեղում, ֆ1 ց.1 .գ 2, թ. 13-14:
[27] «Հայաստանի Հանրապետություն», 03.09.1991:

վիրավորների տեղահանման ու բուժսպասարկման աշխատանքներ կատարելուց բացի, նրանք շատ հաճախ անմիջականորեն մասնակցում էին մարտական գործողություններին՝ զենքը ձեռքներին պաշտպանելով հող հայրենին:

Резюме

Женщины в национально-освободительной борьбе юго-восточных районов Арцаха в 1988-1991гг. (Аскеран, Гадрут, Мартуни)

И.Н. Аванесян, *АрГУ*

В статье освещается участие в 1988-1991гг. женщин-жительниц юго-восточных районов Арцаха в Карабахском движении–национально-освободительной борьбе Арцахского армянства и в самообороне страны. Движение было развернуто во всех районах Арцаха. На подпольной стадии Движения юго-восточные районы полностью были вовлечены в освободительную борьбу. Более того, Инициативные группы этих районов были одними из первых в Автономной Области НК, которые способствовали, чтобы Движение превратилось в общенациональную борьбу. Женщины были причастны ко всему этому. Вообще-то, многочисленность активно участвующих женщин являлась своеобразностью Карабахского движения. Часть из них участвовала в боевых действиях, а другая, оставаясь в тылу, сыграла немаловажную роль в деле продовольственного и материального обеспечения отрядов самообороны.

Summary

Women During the Period of National-Liberation Struggle for South Eastern Regions of Artsakh Throughout 1988 and 1991 (Askeran, Hadrut, Martuni)

I.N. Avanesyan, *ArSU*

The article highlights the participation of female inhabitants of south-eastern regions of Artsakh in the Karabakh Movement, national liberation struggle and the self-defense of the country. The movement eventually spread to all regions of Artsakh. In the first phase of the movement the south-eastern regions of Artsakh were completely immersed in the liberation struggle. Moreover, the initiative groups of those regions were the first in Nagorno-Karabakh Autonomous Region to contribute the movement to turn into a nationwide struggle. All these things happened with the help of women. In general, the Karabakh movement was special due to the active participation of large number of women. Some of them took part in military operations, while others staying behind the lines had no less important roles such as providing food and materials for the self-defense detachments.